# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» փետրվարի 2018 թվականի N 37-Ա

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2018 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) անհատ ձեռնարկատեր Աստղիկ Ռուբենի Սարգսյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ամառանոցային փողոցի թիվ 34/1 Բ հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Լյուդմիլա Պայլյայի Գրիգորյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 118/1 հասցեում,

3) անհատ ձեռնարկատեր Մարինե Ալբերտի Կիրակոսյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 120/1 հասցեում,

4) անհատ ձեռնարկատեր Սամվել Աշխարաբեկի Մելիքսեթյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ փողոցի թիվ 1 հասցեում:

5) անհատ ձեռնարկատեր Արմեն Վահարիճի Հովակիմյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 142 հասցեում;

2. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 2
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«2» փետրվարի 2018 թվականի N 38-Ա

### ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 258-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը 7 անձից՝
Վարդանյան Վահագն Սերյոժայի - համայնքի ավագանու անդամ, Ջրվեժի միջնակարգ դպրոցի ուսուցիչ,
Թադևոսյան Սուսաննա Սերյոժայի - աշխատակազմի քարտուղար,
Մելքումյան Գայանե Սևանի - համայնքի ավագանու անդամ, ընտանեկան բուժքույր,
Հայրապետյան Էլլա Սմբատի - համայնքի ավագանու անդամ, ընտանեկան բուժքույր,
Գևորգյան Արկադի Դերենիկի - համայնքի ավագանու անդամ,
Թադևոսյան Մարգարիտա Միխայիլի – աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Աղաջանյան Սաթենիկ Արամայիսի – աշխատակազմի առաջին կարգի մասնագետ:

2.Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանի վրա:

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» N 258-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» փետրվարի 2018 թվականի N 39-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ալֆրիդա Պողոսի Հայրապետյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 14 հասցեում 2018 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

2. Պարտավորեցնել Ալֆրիդա Պողոսի Հայրապետյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 6
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» փետրվարի 2018 թվականի N 40-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Մարինե Ռոբերտի Դալլաքյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Մարինե Ռոբերտի Դալլաքյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի 3-րդ նրբանցքի թիվ 3 և թիվ 3/1 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Ջրվեժ համայնք, գյուղ Ձորաղբյուր, Լուսավորության փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 3:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» փետրվարի 2018 թվականի N 41-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կարեն Մառլենի Մելքումյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 39 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան և ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 7
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«8» փետրվարի 2018 թվականի N 42-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Կարեն Մաղլենի Մելքումյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 44-րդ փողոցի թիվ 39 հասցեի տնամերձ հողակտորում (կադաստրային համար 07-057-0115-0003) տալ L=200 գծմ երկարության, Ф=25 մմ տրամագծով ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 8
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«8» փետրվարի 2018 թվականի N 43-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ և 8-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Մուլտի Լեոն» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Աղասի Մարգարյան, 2018 թվականին զբաղվելու սեղմված բնական գազի վաճառքով Ջրվեժի գազալցակայանում, միաժամանակ տալով ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվություն:

2. Պարտավորեցնել «Մուլտի Լեոն» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Աղասի Մարգարյան, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 8
գ. Ջրվեժ